

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

*Գրիգոր Կիրակոսյան, Մարիամ Մոմջյան**

Ժամանակակից տնտեսական համակարգերի արդյունավետությունը մեծապես կախված է ենթակառուցվածքների գործունեության որակից և բազմազանությունից, որն իր արտահայտությունն է գտնում սպառողների պահանջմունքների բավարարվածության մակարդակում և, որպես հետևանք, կազմակերպությունների եկամուտներում: Ինտերնետի յուրացման պասիվ փուլից ակտիվ փուլին (որը բնութագրվում է ինտերնետի կիրառմամբ եկամուտներ ստանալով) անցման ճանապարհին ևս մեծ դերակատարում է ձեռք բերում անհրաժեշտ ենթակառուցվածքների առկայությունը՝ հաշվի առնելով այն, որ միայն ընկերության շրջանակներում չի սահմանափակվում ինտերնետի հնարավորությունների կիրառումը: Տեղեկատվական տեխնոլոգիաների թափանցումը կյանքի բոլոր ոլորտներ դարձել է անխուսափելի: Վճարային համակարգերը բացառություն չեն: ՀՀ կառավարությունը ևս գնահատում է էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների հսկայական ներուժն էլեկտրոնային առևտրի, էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային հասարակության ձևավորման գործում: Էլեկտրոնային առևտուրն աստիճանաբար դառնում է գլոբալ տնտեսության անհրաժեշտ բաղադրիչը՝ հանդես գալով որպես տնտեսական աճի արդյունավետ կատալիզատոր: Ինտերնետի և էլեկտրոնային առևտրի հնարավորություններից առավելագույն օգուտ քաղելու համար դրանից պետք է

* Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր:

** Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի միկրոէկոնոմիկայի և ձեռնարկատիրական գործունեության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.:

օգտվեն տնտեսության բոլոր մասնակիցները, իսկ ցանցային տնտեսությունն ձևավորելու համար պետք է լինեն համապատասխան ենթակառուցվածքներ, մինչդեռ ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնները կապված են հենց անհրաժեշտ ենթակառուցվածքների բացակայության կամ դրանց թերզարգացածության հետ: Այդ ենթակառուցվածքներում ուրույն տեղ ունեն վճարահաշվարկային համակարգերը, որոնց կազմում էլ՝ էլեկտրոնային փողերը: Ինտերնետի հնարավորություններն ըստ արժանվույն չօգտագործելու պարագայում, ընկերությունների մասին առավելագույն տեղեկատվություն պարունակող վեբկայքերը նույնիսկ կարող են դառնալ միջոցների անարդյունավետ վատնման աղբյուրներ և ընկերությունների համար չապահովել եկամուտներ: Մինչդեռ, ինտերնետ միջավայրում հասցեական մարքեթինգի շնորհիվ պոտենցիալ գնորդ գտնելը բավական դյուրին է, իսկ հաճախորդների համար լրացուցիչ հարմարավետ պայմաններ ապահովելով, այդ թվում էլեկտրոնային փողերի կիրառմամբ էլեկտրոնային առևտրի կազմակերպումը կարող է տեղափոխվել որակական նոր մակարդակ, որը հնարավորություն կտա ընկերություններին մեծացնել շուկայական մասնաբաժինը և դուրս գալ միջազգային շուկաներ: Ժամանակակից տեխնոլոգիաները վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպություններին և, մասնավորապես, բանկերին ևս հնարավորություն են ընձեռում մատուցվող ծառայությունների մի մասը տեղափոխել որակական նոր մակարդակ՝ դրանով իսկ ներգրավելով նոր սպառողների և կրճատելով սպառողների սպասարկման ծախսերը:

Սպառողների հետ աշխատանքի կազմակերպման մեջ ինտերնետ տեխնոլոգիաների կիրառման վառ օրինակներից է ինտերնետ բանկինգը, որը հնարավորություն է տալիս օրվա ցանկացած ժամի բացել հաշիվներ, կատարել անկանխիկ, ներբանկային և միջբանկային վճարումներ, ժամանակի ցանկացած պահի ստանալ քաղվածք հաշվի մնացորդի մասին, կատարել արտարժույթի առք և վաճառք, վճարումներ, պլաստիկ քարտին մուտքագրել գումարներ կամ հանել քարտից, իրականացնել էլեկտրոնային առևտուր, հետևել հաշվի ընթացիկ վիճակին, էլեկտրոնային թվային

ստորագրության կիրառմամբ անմիջական կապ հաստատել բանկի հետ և այլն: Բանկերի մի մասը համաշխարհային գլոբալ ցանցում մատուցում է նաև բրոքերային ծառայություններ և տալիս ինտերնետի միջոցով վարկեր ստանալու հնարավորություն:

Ներկայումս ինտերնետ բանկային ծառայությունները ԱՄՆ-ում և Արևմուտքում էլեկտրոնային առևտրի առավել դինամիկ զարգացող ոլորտներից են: Յուրաքանչյուր 100 խոշոր բանկերից 80-ը մատուցում է ինտերնետ բանկինգի ծառայություններ: ԱՄՆ-ում ինտերնետ բանկինգի զարգացումը կապվում է *home-banking* (հեռահար բանկային սպասարկմամբ) տեխնոլոգիաների զարգացման հետ: ԱՄՆ-ում առաջին վիրտուալ բանկը դեռ 1995թ. ստեղծված *"Security First Network bank"*-ն է, որը չուներ ոչ մի գրասենյակ ԱՄՆ-ում: *"Fitch IBCA"* վերլուծական ընկերության տվյալներով՝ 2002թ. արդեն էվրոպական խոշոր բանկերի հաճախորդների 28%-ը օգտվում է ինտերնետ բանկինգի ծառայություններից: Այս ցուցանիշը հասկապես բարձր է Շվեդիայում (32%), Ֆինլանդիայում (22%), Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Իսպանիայում և այլուր: Ռուսաստանի Դաշնությունում կիրառվող նման համակարգերից են *«Телебанк» (Степ банк)*, *«Банк-Клиент» (Гута банк)*, *«Кортис»* համակարգերը (*Айти* բանկ) և այլն: Այս համակարգերի նախագծման արժեքը ՌԴ-ում կազմում է մոտ \$5000¹: *JP Morgan* ներդրումային բանկի գնահատականներով Եվրամիության երկրների բանկային համակարգում ինտերնետ բանկինգի ներդրման մակարդակը երեք տարիների ընթացքում 8%-ից աճել է 22%-ի, իսկ ԱՄՆ-ում՝ 15%-ից մինչև 33%: Նշված երկրներում առավել տարածված են Ինտերնետ-հաճախորդ, ինտերնետ-բանկ, Բանկ++, Բանկ-հաճախորդ էլեկտրոնային ծառայությունները²: Ռուսաստանում և Արևմուտքում կիրառվող և լայն տարածում ունեցող ինտերնետ վճարահաշվարկային համակարգերից են նաև Ռուսաստանյան *Webmoney, Paycash, Cashew, Elit, Assist* և այլ համակարգերը, իսկ արևմտյան համակարգերից՝ *Checkfree, Cybercash, Datacash, Netbill* և այլ համակարգերը:

¹ www. fininfor.ru

² «Էլեկտրոնիկա և իրավունք» ամսագիր, N9, Երևան, 2006թ., էջ 46:

Բանկերի կողմից հաճախորդներին կարող են տրամադրվել այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են «առևտրային հրապարակների կազմակերպումը», «էլեկտրոնային վճարումները», «էլեկտրոնային հաշիվների դուրսգրումը» և այլն: Հաշիվներ դուրս գրելու և հասցեատիրոջն առաքելու պարտավորությունն իր վրա վերցնելով՝ բանկն այս ծառայության մատուցման շնորհիվ իր համար ապահովում է լրացուցիչ սպառողներ և եկամուտներ: Իսկ առևտրային հրապարակների կառուցումը բանկի բրենդի ներքո նպաստում է բանկի հաճախորդների միջև համագործակցության կազմակերպմանը և բանկի թղթակից հաշվում գտնվող հաճախորդների միջոցների օգտագործմամբ բանկի համար լրացուցիչ եկամուտների ապահովմանը: Բանկերի հաճախորդներին ծառայություններից օգտվելու և խրախուսելու նպատակով կարելի է ինտերնետ բանկինգի հաճախորդներին տրամադրել նաև լրացուցիչ ծառայություններ, ինչպիսիք են ֆինանսական վիճակի գնահատման գործիքները, որոնք հնարավորություն կտան, օրինակ, մուտքագրված ելակետային տվյալների միջոցով (Ժամկետ, պահանջվող եկամտաբերություն և գումար, սկզբնական ներդրում և այլն) հաշվարկել նախագծերի իրականացման իրական և անվանական եկամտաբերությունը, առաջարկել միջոցների կուտակման և ներդրման օպտիմալ լուծումներ և այլն:

ՀՀ բանկային համակարգն աչքի է ընկնում համեմատական կայունությամբ և տեղեկատվական տեխնոլոգիաներն ակտիվ կիրառելու նախաձեռնությամբ, որի ակնառու օրինակներից են ինտերնետ բանկինգի, օնլայն վճարումների համակարգի ներդրումը և տարածումը: «էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումը դրականորեն անդրադարձավ նաև բանկային ոլորտում ծառայությունների մատուցման էլեկտրոնային եղանակների կիրառման և տարածման վրա: Նշված օրենքով բանկային ոլորտում էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման կարգի և համապատասխան այլ իրավական ակտերի մշակման իրավասությունը վերապահված է ՀՀ Կենտրոնական բանկին, որն էլ մշակել և կիրառում է բանկային համակարգում օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտեր:

ՀՀ-ում ինտերնետ բանկինգի ծառայությունների և դրանցից օգտվողների թիվը մեծ չէ: Մեր հանրապետությունում ինտերնետ բանկինգի ծագումը կապվում է «Յունիբանկ» ՓԲԸ-ի հետ, որը 2003թ. ապահովեց ինտերնետի միջոցով հաշիվների հասանելիությունը հաճախորդներին, ինչպես նաև ներդրեց *e-card-banking* համակարգը: Համակարգից օգտվողների թիվը կազմում է բանկի իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների 30%-ը¹:

Չնայած ՀՀ-ում բանկային ոլորտում վարվող էլեկտրոնային առևտրի զարգացմանն ուղղված միջոցառումներին՝ առաջնային խնդիրը շարունակում է մնալ ՀՀ-ում անկանխիկ շրջանառության խթանումը՝ նվազեցնելով ստվերայնության աստիճանը տնտեսական համակարգում: Անկանխիկ շրջանառությունը խթանելու և վճարումների ոլորտն ավելի թափանցիկ և վերահսկելի դարձնելու գործընթացներում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնցից սկզբնական փուլում կարևորվում են համապատասխան իրավական ակտերը լրամշակելու ճանապարհով վճարահաշվարկային կազմակերպությունների գրանցման ու գործունեության մատչելի և օպտիմալ պահանջների սահմանումը, սպասարկման ենթակառուցվածքների զարգացումը, ՀՀ կառավարության 25.09.1998թ. թիվ 525 որոշումով հաստատված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի ցանկի վերանայումը՝ դրանում ներառելով նաև առևտրի և սպասարկման կետերում POS-տերմինալի (առևտրային կետերում տեղադրված սարք) միջոցով տրամադրվող անդորրագրերը: Նման մոտեցումը կիրառվում է Եվրամիության և Մերձբալթյան երկրներում: Ընդ որում, POS-տերմինալի (առևտրային կետերում տեղադրված սարք) միջոցով տրամադրվող անդորրագրերի ուղղությամբ առաջին քայլերն արդեն արվել են, և ՀՀ Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 1998թ. օգոստոսի 25-ի թիվ 525 որոշմամբ հաստատված ծախս հիմնավորող փաստաթղթի նկատմամբ ներկայացվող պահանջները սահմանելու և այդ փաստաթղթերի կազմման կարգում, որով սահմանվել են վճարային քարտերի անդորրագրերին (*SLIP*) ներկայացվող մի շարք պահանջներ, որոնց բավարարման դեպքում այն կարող է հանդիսանալ որպես ծախս հիմնավորող փաստաթուղթ:

¹ «Էլեկտրոնիկա և իրավունք» ամսագիր, N9, Երևան 2006թ., էջ 46-47:

Ներկայումս ՀՀ տարածքում անկանխիկ շրջանառությունը հիմնականում ապահովում են ՀՀ ԿԲ-ն և ՀՀ-ում գործող 22 առևտրային բանկերը, և մի փոքր բաժինն իրականացվում է վճարահաշվարկային ծառայություններ մատուցող ընկերությունների միջոցով: Վերջիններիս թիվը դեռ մեծ չէ, բայց վերջին տարիներին ՀՀ կառավարության կողմից անկանխիկ շրջանառության զարգացմանն ուղղված միջոցառումների արդյունքում (այդ թվում՝ կենսաթոշակներն անկանխիկ վճարելը) դրանց թվի և մատուցվող ծառայությունների քանակի ու որակի աճ է նկատվում: Այսօր այս շուկայում արդեն գործում են 6 ընկերություններ: ՀՀ-ում Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումների ծավալը 2010թ. տվյալներով կազմել է 13.534.465 մլն դրամ՝ 2009թ. և 2008թ. նույն ժամանակաշրջանների համապատասխանաբար 11.658.110 և 9.085.763 մլն դրամի դիմաց՝ աճելով համապատասխանաբար 16.1 և 48.9%-ով: Այս աճն ապահովվել է նաև ի հաշիվ ՀՀ էլեկտրոնային վճարումների համակարգով կատարված փոխանցումների աճի, որոնց ծավալը նշված ժամանակաշրջաններում կազմել է համապատասխանաբար 7.523.573,5, 990.307 և 4.859.976 մլն դրամ՝ աճելով 25.5 և 54.8%-ով: Նույն ժամանակաշրջաններում ՀՀ տարածքում անկանխիկ վճարահաշվարկային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումների ծավալը կազմել է համապատասխանաբար 17.116.866, 14 655.397 և 15.135.666 մլն դրամ, այդ թվում՝ էլեկտրոնային վճարահաշվարկային հանձնարարականներով կատարված գործարքները, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 10.178.918, 7.793.560 և 10.289.081 մլն (2008 թվականի տվյալներում կատարվել է ճշգրտում) դրամ՝ 2010թ. 2009 թվականի համեմատ ցուցաբերելով 30.6% աճ՝ թղթային վճարահաշվարկային հանձնարարականներով իրականացված փոխանցումների 1.1% աճի դիմաց¹: էլեկտրոնային վճարահաշվարկային հանձնարարականներով կատարված գործարքների տարածաշրջանային հոսքերի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց գերակշռող մասը բաժին է ընկնում Երևանից կատարվող փոխանցումներին:

¹ www.cba.am/ Վճարահաշվարկային համակարգ:

2009-2010թթ. աճել է նաև շրջանառվող քարտերի քանակը և քարտերով իրականացված գործառնությունների ծավալը՝ համապատասխանաբար 27.6 և 30.3%-ով: ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրամադրված (շրջանառության մեջ գտնվող) քարտերի քանակի կառուցվածքում 2010թ. ԱրՔա քարտերի տեսակարար կշիռը կազմել է 41.9%: «Visa» և «Master Card» միջազգային քարտային համակարգերի քարտերի տեսակարար կշիռը տրամադրված քարտերում կազմել է համապատասխանաբար՝ 36.9% և 15.8%, իսկ մնացած մասը՝ 5.4%, կազմել են միջազգային այլ քարտային համակարգերը, որտեղ ընդգրկված են նաև *HSBC debit* քարտերը: 2010թ. ՀՀ տարածքում քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 558.350 մլն դրամ՝ 2000թ. 14.862.26 մլն դրամի դիմաց և 2009թ. 428.248 մլն դրամի դիմաց¹: Ընդ որում, նշված գործառնություններում աճել է քարտերով անկանխիկ կատարված գործառնությունների ծավալը, որը մասամբ պայմանավորված է այն հանգամանքով, որ ընդլայնվել է ՀՀ բանկերի կողմից տրամադրված քարտերով մատուցվող ծառայությունների ցանկը՝ մասնավորապես ինտերնետ միջավայրում քարտերով կոմունալ վճարումներից և ինտերնետ առևտրից բացի, քարտատերերին հնարավորություն է տրվել կատարել քարտից քարտ վճարումներ: ՀՀ-ում ոչ բոլոր ինտերնետ խանութներում են կիրառվում օնլայն վճարման համակարգեր, որը պայմանավորված է նման համակարգերի ցածր պաշտպանվածության, գործունեության ոլորտների սահմանափակ ընդգրկվածության և գնորդների անվստահության հանգամանքով: Ինտերնետ խանութներից գնումների դիմաց միջազգային պրակտիկայում կիրառվող վճարման հայտնի եղանակներից (կանխիկ վճարումներ, վճարումներ պլաստիկ քարտերով, էլեկտրոնային փողեր) ՀՀ-ում կիրառվում են հիմնականում կանխիկ վճարումները, իսկ կատարված օնլայն վճարումների մոտ 80%-ը ՀՀ-ում բաժին է ընկնում ԱրՔա համակարգին: Համակարգին անդամակցում են 19 առևտրային բանկեր, իսկ համակարգի հաճախորդների թիվը ներկայումս կազմում է 634.547: Վերտուալ ԱրՔա քարտը նախատեսված է ինտերնետի միջոցով վճարումներ, գնումներ,

¹ www.cba.am/ Վճարահաշվարկային համակարգ /վիճակագրություն և հաշվետվություններ:

բանկային գործարքներ և այլ գործառնություններ կատարելու և ծառայություններից օգտվելու համար: ԱրՔա քարտը սպասարկվում է 51 ինտերնետ կայքերում, որոնց հիմնական մասը էլեկտրոնային և ինտերնետ ծառայություններ մատուցող կազմակերպություններ են և բանկերը, ինչպես նաև ինտերնետ աճուրդների կազմակերպման և էլեկտրոնային կառավարման մեկական կայքերում¹:

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից հաճախորդներին մատուցվում են նաև ծառայություններ բանկային հեռահար սպասարկման համակարգերի (*PC banking, Internet-banking, Telebanking, mobile phone, Home-banking*) միջոցով: Այս համակարգերը հաճախորդներին թույլ են տալիս ստանալ տեղեկատվություն իրենց հաշվի շարժի մասին, իրականացնել հաշվի կառավարում՝ ներկայացնելով բանկին հանձնարարականներ:

ՀՀ-ում պլաստիկ քարտերի տարածումը սահմանափակ է՝ պայմանավորված նաև անվտանգության խնդիրներով: ՀՀ-ում բանկումատներից մնացորդի հարցում կատարելիս հաճախորդի հաշվի մնացորդի մեծությունը հայտնի կարող է դառնալ նաև մոտակայքում գտնվող ցանկացած անձի: Մինչդեռ, կարելի է այն էկրանին ցույց տալ աստղանիշերով, իսկ հաճախորդը կարող է դրան տեղեկանալ տպված անդորրագրից: ՀՀ-ում բացակայում է նաև բանկումատների միջոցով հաշվին կանխիկ գումար մուտքագրելու հնարավորությունը:

Ինտերնետում էլեկտրոնային պլաստիկ քարտերի, էլեկտրոնային քսակների լիցքավորման և այլ քարտերի կիրառմամբ առաջ է գալիս հիմնախնդիր՝ կապված այդ քարտերի ռեկվիզիտներն այլ անձանց հայտնի դառնալու և նրանց կողմից դրանք օգտագործելու վտանգի հետ: Խնդիրները պայմանավորված են նաև անվտանգության համակարգերի ներդրման տեխնոլոգիական բարդություններով և բարձր արժեքով: Սովորաբար ինտերնետ բանկինգի ծառայությունների արժեքը բաղկացած է միացման վճարից և բաժանորդային վճարից: Ռուսաստանի Դաշնությունում նշված վճարների գումարը կազմում է համապատասխանաբար 40-100 և ամսա-

¹ www.arca.am/ կայքեր, բանկեր:

կան \$15-30-ին համարժեք ռուբլի¹: Իսկ ՀՀ-ում ինտերնետ միջավայրում վճարահաշվարկային ծառայություններ մատուցող ԱրՔա ընկերությունը սահմանել է տարեկան սպասարկման վճար համակարգի վարման համար, սերտիֆիկացիայի վճար յուրաքանչյուր սպասարկման կետի համար (5000 դրամ), միջնորդավճարներ գործառնությունների, հետզանձման համար, առևտրային կետից սպասարկողի կողմից գանձվող նվազագույն սակագներ և այլն: Իսկ էլեկտրոնային փողերի կիրառմամբ մասամբ կարող են լուծվել նշված հիմնախնդիրները, մանավանդ որ էլեկտրոնային փողերն ունեն նաև կիրառման լայն շրջանակներ և հնարավորություններ: Մակայն էլեկտրոնային փողերի թողարկման համար ծրագրային լուծումներ առաջարկողները հատկապես պետք է վայելեն պատվիրատուի (ի դեմս, օրինակ, կառավարության) լիարժեք վստահությունը, քանի որ ընկերությունների առևտրային գաղտնիք համարվող տեղեկություններն ամբողջությամբ հայտնվելու են ծրագրային լուծումներ առաջարկողների և դրանք սպասարկողների մոտ:

Ընդհանուր առմամբ, ինտերնետ վճարահաշվարկային համակարգերը դասակարգվում են դեբետայինի (որոնք աշխատում են էլեկտրոնային չեկերով և թվային կանխիկի միջոցով), կրեդիտայինի (պլաստիկ քարտերով աշխատող)²: ՀՀ-ում այժմ էլեկտրոնային կանխիկ կարող են թողարկել ինչպես բանկերը, այնպես էլ ոչ բանկային կազմակերպությունները, բայց դեռ բացակայում է տարբեր տեսակի էլեկտրոնային փողերի փոխարկման միասնական լիարժեք գործող համակարգը: Իսկ էլեկտրոնային չեկերով վճարման սխեմայի ներդրումը ՀՀ-ում պահանջում է համապատասխան կառույցների (մասնավորապես, հավաստագրման կենտրոնների) առկայություն:

Իսկ ի՞նչ են էլեկտրոնային փողերը և ինտերնետ վճարային միջոցներն ընդհանրապես:

Համաձայն «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝ էլեկտրոնային փողը թողարկողի նկատմամբ դրամական պահանջ արտահայտող դրամական արժեքն է, որը՝

¹ www.gallup.spb.ru և www.cyberplat.com

² «Электронная коммерция», Д.Козье, Русская редакция, 1999 г, стр. 33-46.

- պահվում է էլեկտրոնային սարքի վրա,
- թողարկվում է ստացված դրամական միջոցների դիմաց, որոնց արժողությունը չի կարող ավելի փոքր լինել, քան թողարկված էլեկտրոնային փողի արժեքը,
- ընդունվում է որպես վճարամիջոց թողարկողից տարբերվող այլ անձանց կողմից.
- շահառուն վճարման ստացման վերջնական հասցեատերն է:

ՀՀ-ում էլեկտրոնային փող թողարկող է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի խորհրդի կողմից դրամական (փողային) փոխանցումների իրականացման լիցենզիա ստացած կազմակերպությունը, որը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից ստացել է նաև էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն, կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող առևտրային բանկը, կամ օտարերկրյա առևտրային բանկի մասնաճյուղը, կամ այլ կազմակերպություն, որը Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում է էլեկտրոնային փողերի թողարկում՝ Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ իրավական ակտերի համաձայն:

Էլեկտրոնային փողերի ՀՀ-ում տրված սահմանումը համահունչ է Եվրախորհրդարանի 2000/46/EC առ 18.09.2000թ. տրված էլեկտրոնային փողերի սահմանմանը:

Էլեկտրոնային փողերի թողարկման և կիրառման նպատակն ինտերնետ գործարքներ կատարելիս տարբեր մատակարարների մոտ ընդունելի միասնական վճարահաշվարկային միջոց ունենալն է, այսինքն՝ էլեկտրոնային փողերն, ի տարբերություն այսօր ՀՀ-ում կիրառվող այլ էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների, ընդունվում են ոչ միայն թողարկողի, այլև երրորդ անձանց կողմից: Էլեկտրոնային փողերի կիրառումը հնարավորություն կտա մեծացնել կապիտալի շրջանառելիությունը, ինչպես նաև կվերանա ինկասացիայի կազմակերպման և, հետևաբար, դրա վրա կատարվող ծախսերի իրականացման անհրաժեշտությունը: Էլեկտրոնային փողերի համակարգի առավելություններից մեկը, ի թիվս այլոց, դրանց կիր-

րառման արագությունն է: Էլեկտրոնային փողերի համակարգն այլ վճարահաշվարկային համակարգերից տարբերվում է իր հարմարավետությամբ: Փորձը ցույց է տալիս, որ ինտերնետ վճարահաշվարկային համակարգերից օգտվելու փորձ չունեցող և դրանց կասկածանքով վերաբերվող սպառողները փոխում են դրանց նկատմամբ վերաբերմունքը և վստահությունը առաջին իսկ հաջողված փորձից հետո, իսկ հենց ինտերնետ խանութների կազմակերպիչների կողմից թողարկված էլեկտրոնային փողերի կիրառման հնարավորությունը կհանդիսանա այդ խանութներից գնումներ կատարելու լրացուցիչ խթան և գործիք էլեկտրոնային փողերի նկատմամբ սպառողների վստահությունը բարձրացնելու համար: Հաշվի առնելով էլեկտրոնային փողերի համակարգի համեմատաբար նոր լինելը և դրա կիրառումից բխող հնարավոր ռիսկերը՝ Եվրամիության երկրներում էլեկտրոնային փողեր թողարկողների նկատմամբ սահմանվում են տարբեր պահանջներ, որոնք վերաբերում են թողարկողի հուսալիությանը և ապահովությանը (կապիտալին և ներդրումների ներկայացվող պահանջների միջոցով), էլեկտրոնային փողերի շրջանառությանը և անվտանգության ապահովմանը (այդ թվում վերադարձի, մարման ընթացակարգեր), կանխիկացման հնարավորությանը, բանկային գաղտնիքի պահպանության, սպառողների շահերի պաշտպանությանը և այլն:

ՀՀ-ում ևս էլեկտրոնային փողերի կիրառման հնարավորությունների օրենսդրական դաշտը ոչ լիարժեք, բայց կանոնակարգված է, և արվում են համապատասխան քայլեր դրա արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Ընդհանրապես, էլեկտրոնային փողերի շուկայի ձևավորման համար անհրաժեշտ են հետևյալ 3 բաղկացուցիչները՝

- տեխնոլոգիական ենթակառուցվածքների առկայություն,
- օրենսդրական և կարգավորման բազայի առկայություն, որը կարող է միավորել թվային շուկաներում գործունեության նոր եղանակների խրախուսումը,
- աուտենտիֆիկացիայի և անվտանգության համակարգերի առկայություն:

Էլեկտրոնային փողերի համակարգի ներդրումը ՀՀ-ում, ճիշտ է, ողջունելի է, բայց դրա լիարժեք կիրառման համար անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային փողերի լրիվ ֆունկցիոնալ համակարգ և ոչ թե ներդնել միայն դրա առանձին բաղադրիչները: ՀՀ-ում էլեկտրոնային փողերի շուկայի ձևավորման և էլեկտրոնային փողերի համակարգի ներդրման առաջին քայլերից են ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2010 թվականին ընդունված 13/04/2010 համար 73Ն Էլեկտրոնային փողերի թողարկման և սպասարկման (շրջանառության) կարգն ու պայմանները, էլեկտրոնային փողերով գործարքների իրականացմանը ներկայացվող պահանջները կանոնակարգ 16/2-ը հաստատելու մասին և 13/04/2010 համար 74Ն Էլեկտրոնային փող թողարկելու թույլտվության տրամադրման, կասեցման և դադարեցման կարգն ու պայմանները, էլեկտրոնային փող թողարկողներին ներկայացվող պահանջները, կանոնակարգ 16/1-ը հաստատելու մասին որոշումները, որոնք միտված են էլեկտրոնային փողերի թողարկումը և կիրառումը խրախուսելուն, չնայած կանոնակարգերում նշված որոշ դրույթներ չեն կարող ՀՀ-ի նման փոքր շուկա ունեցող երկրում նպաստել էլեկտրոնային փողերի թողարկմանը և ակտիվ կիրառմանը, մասնավորապես էլեկտրոնային փողերով գործարքների առավելագույն չափի սահմանափակումը (200 հազար ՀՀ դրամ), քանի որ ինտերնետ առևտուրը, միտված լինելով կազմակերպությունների համար միջազգային շուկաներ դուրս գալուն՝ մի կողմից, և սպառողների համար ինտերնետի միջոցով արտերկրից ապրանքներ ձեռք բերելուն՝ մյուս կողմից, ենթադրում է ավելի մեծ շրջանառության ծավալներ: Բացի այդ, կանոնակարգով էլեկտրոնային փողեր թողարկողների և օգտագործողների, ծառայություններ մատուցողների և գործակալների և այլ շահագրգիռ կողմերի միջև հարաբերությունների կանոնակարգման իրավասությունը (թողարկողի կողմից էլեկտրոնային փողերով գործառնությունների կատարումն ապահովող ներքին կարգերի, կանոնների և պայմանների մշակումը) վերապահված է թողարկողներին և ամրագրվում է համապատասխան պայմանագրերով, մինչդեռ նպատակահարմար կլիներ շուկայի մասնակիցների համար հավասար պայմաններ ապահովելու նպատակով վերը նշված անձանց միջև կնքվող պայմանագրե-

րի օրինակելի ձևերը սահմանված լինեին ՀՀ ԿԲ-ի կողմից, իսկ մրցակցությունն ընթանալիս նրանց կողմից առաջարկվող ծառայությունների որակի, բազմազանության և սակագների շրջանակներում: Բացի այդ, նշված կանոնակարգերով թողարկողների նկատմամբ սահմանված են դժվար հասանելի, երբեմն նաև առանձին կազմակերպությունների համար անհասանելի պահանջներ (օրինակ, 30 մլն դրամ դեպոնացված գումար, կանոնադրական կապիտալ, լիցենզիայի, ծրագրա-ապարատային և այլ պահանջներ), որոնք առանձին թողարկողների համար (հատկապես փոքր ու միջին կազմակերպությունների) կարող են լինել անհասանելի, որն էլ կարող է հանգեցնել դաշտի մոնոպոլացման: Բացի այդ, միջազգային վճարահաշվարկային կազմակերպություններին միանալիս ևս հայրենական ընկերությունների առջև դրվում են խիստ պահանջներ՝ կապված աշխատանքի թափանցիկության, ֆինանսական ցուցանիշների մակարդակի և այլնի հետ, որոնք կարող են ապահովել ոչ բոլոր հայրենական ընկերությունները:

Հայրենական էլեկտրոնային փող թողարկողների համար լրացուցիչ դժվարություններ կան նաև արժեթղթերի շուկայի ոչ բավարար զարգացածության հետ: Միջազգային պրակտիկայում բազմաթիվ ընկերություններ, որոնք ունեն նորարարական գաղափարներ, դուրս են գալիս ֆոնդային շուկաներ և ներգրավում ներդրումներ: Այդ պատճառով, պետական աջակցող քաղաքականությունը կարևոր է ոլորտի զարգացման համար, բայց ոչ բավարար: Այն առաջին հերթին պետք է ուղղված լինի ոլորտի զարգացմանն անհրաժեշտ ենթակառուցվածքների համար ներդրումների ներգրավմանը, որոնց իրականացումը թողարկողների կողմից կարող է լինել ոչ շահութաբեր: Անհրաժեշտ են էլեկտրոնային փողերի կիրառումը խթանող գործուն մեխանիզմներ, իսկ հնարավոր հիմնախնդիրները կծագեն արդեն էլեկտրոնային փողերի կիրառման հետևանքով միայն և կլինեն համակարգի գործունեության արդյունք: Էլեկտրոնային փողերի համակարգերին վերաբերող ՀՀ ԿԲ կանոնակարգերը չպետք է լինեն միայն էլեկտրոնային փողերի թողարկման տեխնիկական լուծումները բնութագրող իրավական ակտեր և լրացումներ, այլ պետք է լինեն ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորող համալիր իրավական ակտեր՝ վերաբերելով նաև դրանց փոխազդեցու-

թյուններին: Ընդ որում, իրավական ակտը տեխնոլոգիական լուծումների ազդեցությունից զերծ պահելը կբացառի նաև տեխնոլոգիական հեղափոխությունների ազդեցությունն իրավական ակտերի փոփոխության վրա: Էլեկտրոնային փողերի թողարկման տեխնիկական լուծումները կարող են առավելագույնը պահանջվել էլեկտրոնային փողերի մասին ստանդարտներով:

Էլեկտրոնային փողերի շրջանառության կարգը պետք է նպաստի նաև տեխնոլոգիական նորարարությունն էլեկտրոնային վճարումների համակարգերի շուկայում խթանելուն՝ դեպի տարբեր վճարային համակարգեր հասանելիության ապահովման համար ներդաշնակ պայմաններ սահմանելու միջոցով: Էլեկտրոնային փողերի շրջանառության կարգի նպատակը պետք է լինի նաև պասիվ ենթակառուցվածքների համատեղ օգտագործման համար ներդաշնակեցված պայմանների ապահովման միջոցով էլեկտրոնային փողերի համակարգերի ներդրման և զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ձևավորումը խթանելը (այդ թվում՝ պետության կողմից) և մրցակցային էլեկտրոնային վճարային ծառայությունների մատուցմանը նպաստելը:

Էլեկտրոնային փողերի կիրառման սկզբնական քայլը, սակայն, պետք է լինի սպառողների մոտ դրա նկատմամբ համախոհության և էլեկտրոնային փողերի ճանաչվածության մակարդակի ձևավորումը, քանի որ սկզբնական շրջանում դրա կիրառման հետևանքը և նպատակը ոչ թե էլեկտրոնային փողերի ուղղակի շրջանառության աճն է, այլ էլեկտրոնային փողերի դրական հատկանիշների մասին սպառողներին ճիշտ տեսանկյունից իրազեկելը, որն արդեն ճիշտ իրականացնելու դեպքում կհանգեցնի էլեկտրոնային փողերի շրջանառության աճին և կիրառման խթանմանը: Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ կարելի է եզրակացնել, որ որպես էլեկտրոնային փողերի նկատմամբ սկզբնական պահանջարկը բավարարողներ հանդես կգան ներկայումս էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցներ թողարկողները նաև այն պատճառով, որ սպառողների տեսանկյունից առավել հետաքրքրություն են ներկայացնում այն նախագծերը, որոնց հետևում կանգնած է իրական բիզնեսը, և կան ապագայի զարգացման հեռանկարներ, որոնք արդեն ունեն իրական շրջանառություն, զար-

զացման հստակ ռազմավարություն, որոնց ֆինանսական գործունեության արդյունքները բաց են ու թափանցիկ: Էլեկտրոնային փողերի նկատմամբ առաջնային պահանջարկը բավարարելուց հետո դրանք թողարկողները կանցնեն լրացուցիչ ծառայությունների, և ապրանքների մատուցմանը և առաջարկմանը, ինչպես նաև մրցակցության զարգացմանը զուգընթաց՝ կնկատվի կանխիկացման, միջնորդավճարների, փոխարկման ծառայությունների դիմաց սակագների նվազում:

Էլեկտրոնային առևտրի, էլեկտրոնային վճարումների համակարգի, էլեկտրոնային կառավարման զարգացումը պետք է ընթանա միաժամանակ և հիմք հանդիսանա էլեկտրոնային գործարարության զարգացման համար: Իսկ իրավական ակտերի լրամշակմանը զուգահեռ՝ անհրաժեշտ է ձեռնարկել քայլեր՝ թափանցիկ և վերահսկվող էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների կարգավորման համակարգ ստեղծելու ուղղությամբ: Էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների ոլորտում կարգավորման եղանակները, նպատակը և խնդիրները պետք է հանգեն հետևյալին՝

- ինտերնետ միջավայրում հայաստանյան էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների թողարկման, շրջանառության կառավարման կարգի լրամշակմանը և կիրառման ապահովմանը,
- հայաստանյան էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների վարկունակության և միջազգային էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների հետ համագործակցության արդյունքում դրանց իրացվելիության և փոխարկելիության մակարդակի ապահովմանը և բարելավմանը,
- էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների համակարգի զարգացման ռազմավարության հիմնական ուղղությունների մշակմանը,
- էլեկտրոնային և կանխիկ փողերի համարժեքության ապահովմանը,
- ներդրումների իրականացմանը,
- էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների կիրառման վերահսկմանը և պատասխանատվության մեխանիզմների սահմանմանը:

Էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների շուկայի կարգավորման սկզբունքները պետք է լինեն հետևյալները՝

1. նվազագույնի հասցնել պետության (մասնավորապես՝ ՀՀ ԿԲ-ի) լիազորությունները,
2. ապահովել շուկայի գործընթացների առավելագույն թափանցիկությունը՝ շուկայի աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով,
3. գոյություն ունեցող և պոտենցիալ շուկայի մասնակիցներին ընձեռել հավասար հնարավորություն շուկա մուտքի համար:

Շուկան պետք է զարգանա հետևյալ ուղղություններով՝ էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների նկատմամբ սպառողների վստահության բարձրացմանը զուգընթաց՝ շուկայի աստիճանական ազատականացում և ամբողջական մրցակցային տարածքային շուկայի ստեղծում, լիցենզավորման պարզեցված ընթացակարգերի կիրառում, որոնց նպատակն է՝

- մեծացնել ինտերնետ միջավայրում գործարքների կատարման արդյունավետությունը,
- զարգացնել ինտերնետ խանութների մրցունակ համակարգ՝ բացելով շուկան սպառողների համար և ապահովել մրցունակ շուկայի պայմաններում վերջիններիս հետ ազատ ու անմիջականորեն համագործակցելու հնարավորություն՝ գործարքների կնքման օնլայն հնարավորությունների կիրառմամբ,
- ապահովել էլեկտրոնային վճարահաշվարկային միջոցների կիրառման անվտանգությունը,
- նվազեցնել պետության միջամտության աստիճանը,
- խթանել ներդրումների ներգրավումը:

Պետության լիազոր մարմինը տեղեկատվական տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների շնորհիվ կարող է օպերատիվ կերպով կառավարել կանխիկ և անկանխիկ փողի շրջանառությունը տնտեսության մեջ՝ համաձայնեցնելով էմիտենտների աշխատանքը և օպերատիվ կերպով արձագանքելով էլեկտրոնային փողերի շուկայում տեղի ունեցող գործընթացներին: Սա հնարավորություն կտա առավել ճշգրիտ գնահատել

ռիսկերը և միջոցներ ձեռնարկել այդ ռիսկերի կառավարման գծով՝ պաշտպանելով էլեկտրոնային փողերի համակարգի շահառուների շահերը, այդ թվում՝ թողարկման լիցենզիա ստանալիս թողարկողների առաջարկների պաշտպանությունը: Ի վերջո, էլեկտրոնային փողերի կիրառումը միտված է արտադրողականության բարելավմանը և օնլայն շուկաներ մուտքի հնարավորություն ընձեռելու շնորհիվ բիզնես միավորների մրցունակության բարձրացմանը՝ շրջանառության ժամկետների և գործարքային ծախսերի կրճատման շնորհիվ: Իսկ էլեկտրոնային փողերի շուկայի ձևավորման սկզբնական շրջանում պետությունը կարող է սահմանափակվել կոնվերտացման մարժաների առավելագույն մեծություններ սահմանելով՝ շուկայում տեղ թողնելով նաև մրցակցությանը և ընկերությունների գործունեության դիվերսիֆիկացմանը (նաև առաքման ծառայություններ, հաճախորդներին ինտերնետ կայքերից գնումներ կատարելու մասին խորհրդատվություններ, օժանդակություն և այլն):

Այսպիսով, հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները և առաջընթացն առաջացրել են սպառողների ֆինանսական միջոցների շուրջօրյա կառավարման անհրաժեշտություն, իսկ ինտերնետ բանկինգը նոր տեխնոլոգիաների կիրառման ակնառու օրինակներից է, որը թույլ է տալիս սպառողների բանկային սպասարկումը տեղափոխել որակական նոր մակարդակ՝ ապահովելով առավել արագ, հարմար և անվտանգ բանկային սպասարկում: ՀՀ-ում ևս ինտերնետ բանկինգի զարգացումը որպես բանկային ծառայության տարատեսակ, ունի զարգացման հեռանկար՝ հաշվի առնելով նաև ՀՀ-ում բարձր տեխնոլոգիաների զարգացման տեմպերը և նոր սերնդի բանկային արտադրանքների զարգացումը: Ինտերնետ վճարումների համակարգի կիրառումը հնարավորություն է տալիս պատվերների ձևակերպման և դրանց մշակման ծառայությունը կամ էլեկտրոնային վեբ-ցուցափեղկերը վերածել լիարժեք ինտերնետ խանութի: Մինչդեռ, ՀՀ-ում ինտերնետ խանութների սահմանափակ լինելը պայմանավորող գործոններից հիմնականը էլեկտրոնային վճարման համակարգերի քիչ տարածվածությունն է, որը պայմանավորված է էլեկտրոնային վճարումների համակարգի կազմակերպական և իրավական կար-

գավորման, ինտերնետի կիրառմամբ գործարքների իրականացման անվտանգության ապահովման համակարգերի անկատարությամբ և որպես հետևանք ՀՀ-ում վարկային և պլաստիկ քարտերի կիրառման ցածր մակարդակով, վճարման օնլայն եղանակների նկատմամբ սպառողների անվստահությամբ, բնակչության եկամուտների, ինտերնետի տարածվածության ցածր մակարդակով, հաճախորդների համար ծառայությունների ցածր գրավչությամբ և այլ գործոններով: Իսկ ՀՀ-ում էլեկտրոնային փողերի տարածմանը խոչընդոտող գործոնները կարելի է խմբավորել 3 հիմնական խմբերում՝ բիզնես, տեխնոլոգիական և ինտեգրացիոն հիմնախնդիրներ: Ուստի, էլեկտրոնային փողերի համակարգի զարգացման հայեցակարգը պետք է մշակված լինի այս բոլոր հիմնախնդիրների միասնական վերլուծության արդյունքում: Պետք է հստակ սահմանված և կարգավորված լինեն էլեկտրոնային փող թողարկողների իրավունքները և պարտականությունները, դրանց շրջանառության հետ կապված փոխհարաբերությունները, ինչպես նաև էլեկտրոնային փողերի շրջանառության ազդեցությունը տնտեսության մեջ փողի զանգվածի վրա: Տնտեսության իրական հատվածում ևս անհրաժեշտ է իրականացնել բիզնես գործընթացների վերակազմակերպում՝ ուղղված աշխատանքի արտադրողականության աճին և բաց թողնված հնարավորությունների օգտագործմանը տնտեսության առանձին ոլորտներում: Օրինակ, ՀՀ-ում, որտեղ տնտեսության զարգացման գերակա ուղղություն է համարվում զբոսաշրջությունը, կա էլեկտրոնային փողերը կիրառելու մեծ ներուժ:

Հուլիս, 2011թ.

ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЭЛЕКТРОННЫХ ПЛАТЕЖНО-РАСЧЕТНЫХ СИСТЕМ В РА

Григор Киракосян, Мариам Момджян

Резюме

Электронная коммерция стремительно становится неотъемлемой и необходимой частью глобальной экономики, выступая эффективным катализатором экономического роста. С целью получения наибольших выгод от использования возможностей Интернета и формирования сетевой экономики необходимы соответствующие инфраструктуры, где важную роль играют платежно-расчетные системы и, в том числе, электронные деньги. Современные технологии дают неограниченные возможности организациям, предоставляющим платежно-расчетные услуги (в частности, банкам), чтобы переместить часть предоставляемых услуг на другой качественный уровень, что позволит им привлекать новых клиентов и снизить расходы на их обслуживание, а компаниям предоставится возможность увеличить рыночную долю и выйти на международные рынки. Цель эмитирования и применения электронных денег – располагать при заключении интернет-сделок едиными платежно-расчетными средствами, приемлемыми всеми сторонами, что позволит увеличить оборачиваемость капитала за счет скорости их применения. Но применение электронных денег в РА ограничено, что связано со следующими тремя группами факторов: бизнес, технологические и интеграционные проблемы. Исходя из этого, концепция развития систем электронных денег должна быть разработана только после тщательного анализа перечисленных проблем.